ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ՄԳՏԿ «կանոնավոր» նախագծերի համաֆինանսավորման մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ) և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը (այսուհետ՝ ՄԳՏԿ)՝

հաշվի առնելով, որ

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի յուրաքանչյուր նիստին ՄԳՏԿ-ն հաստատում է «կանոնավոր» նախագծերի ֆինանսավորումը,

նախկինում «կանոնավոր» նախագծերի իրականացման համար ֆինանսական միջոցները տրամադրվում էին Եվրոպական միության, Կանադայի, Կորեայի, Նորվեգիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ճապոնիայի կողմից,

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվելիք ընտրված որոշ «կանոնավոր» նախագծերի իրականացման համար ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման դիմաց մտադիր է ներդնել ֆինանսական միջոցներ (նախագծի ընդհանուր բյուջեի 10-20% չափով)՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց ուղղակի վճարումներ կատարելու միջոցով,

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ֆինանսական ներդրումները սահմանափակ են և կատարվելու են ուղղակիորեն, հաստատված և համաձայնեցված է, որ համաֆինանսավորման սկզբունքը չի ազդի մտավոր սեփականության հանդեպ իրավունքների բաշխման վրա, որը յուրաքանչյուր «կանոնավոր» նախագծի դեպքում սահմանված է 1994 թվականին հաստատված ՄԳՏԿ կանոնադրության 13-րդ հոդվածով,

սույն Փոխըմբռնման հուշագրով (այսուհետև՝ Հուշագիր) չի արգելվում կամ կասկածի տակ չի դրվում Հայաստանի Հանրապետության որևէ մասնակցի հնարավորությունը՝ դիմելու կամ ստանալու նախագծի ամբողջական ծավալով ֆինանսավորում ՄԳՏԿ ֆինանսավորող Կողմերից,

սույն Հուշագրով չի նախատեսվում փոփոխության ենթարկել 1992 թվականին ՄԳՏԿ հիմնադրման համաձայնագրով հաստատված ՄԳՏԿ ֆինանսավորող անդամ պետությունների իրավունքները և պարտավորություններ,

ստորագրեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

Հոդված 1

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի յուրաքանչյուր նիստից առաջ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կորոշի Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվելիք այն նախագծերի ֆինանսավորման կոնկրետ թիվը կամ իր կողմից հատկացվելիք չափաբաժնի սահմանները, որոնք այնուհետև կընտրվեն ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի նիստին: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա «կանոնավոր» նախագծերի համաֆինանսավորման մասին որոշումը կկայացվի ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից: Հայկական կողմից նախագծերի ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ միջոցով, որը ՀՀ կրթության և գիտության նախարարության մասն է:

Հոդված 2

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագծերի աշխատանքային պլանում կնշի այն ապրանքների և ծառայությունների կոնկրետ ցանկը, որոնց դիմաց պարտավորվում է կատարել վճարումներ՝ համաձայն համաֆինանսավորման սխեմայի: Միևնույն ժամանակ հաստատվում է, որ այդ ֆինանսական միջոցները չեն տրամադրվելու ՄԳՏԿ-ի միջոցով:

Հոդված 3

Սույն Հուշագրի իրականացման նպատակով ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ուսումնասիրելով «կանոնավոր» նախագծերի առաջարկները, ի լրումն պետական աջակցության, կպատրաստի և քարտուղարություն կներկայացնի իր նախատեսած համաֆինանսավորման չափաբաժնի մանրամասները:

Հոդված 4

Սույն Հուշագրի շրջանակներում ծրագրերի համաֆինանսավորման ընթացքը հնարավորինս պարզեցնելու նպատակով ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նպատակադրված է համագործակցել կառավարիչների խորհրդում ներկայացված Կողմերի, ինչպես նաև ՄԳՏԿ քարտուղարության հետ:

Հոդված 5

Կախված հանգամանքներից և համընդհանուր փորձից՝ Կողմերը միմյանց նկատմամբ պարտավորվում են գործել հաստատակամությամբ, բարյացակամությամբ և խոհեմաբար՝ Հուշագրի իրականացման ողջ ընթացքում մշակելով նախագծերի համաֆինանսավորման կոնկրետ ձևեր և միջոցներ՝ միևնույն ժամանակ չսահմանափակվելով վերջինով:

Հոդված 6

Չոտնահարելով ՄԳՏԿ կառավարիչների խորհրդում ներկայացված ֆինանսավորող Կողմերից որևէ մեկի իրավունքները՝ կառավարիչների խորհրդի յուրաքանչյուր նիստի ընթացքում որոշում կկայացվի այն նախագծերի մասին, որոնք նրանք պատրաստ են ֆինանսավորել:

Հոդված 7

Սույն Հուշագիրը ստորագրող Կողմերը գիտակցում են, որ ո՛չ Հուշագիրը և ո՛չ դրա առանձին դրույթները չեն նախատեսում միջազգային իրավունքից բխող որևէ պարտավորություն:

Կատարված է ք. Երևանում, 2009 թ. ապրիլի «1»-ին, անգլերեն և հայերեն լեզուներով, երկուական բնօրինակից, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: